Արմավիրի
Զարգացման Կենտրոն
սոցիալ-տնտեսական
հասարակական կազմակերպություն

Armavir
Development Center
socio - economic
non-governmental organization

0901 ք. Արմավիր, Շահումյան 68ա
Հեռ. (+374 –237) 2 3034
Էլ. հասցե armavirdc.ngo@gmail.com

0901 Armavir, Shahumyan 68a
Tel (+374 –237) 2 3034
E-mail armavirdc.ngo@gmail.com

Թիվ 235/01
08.09.2023թ.

Վարդենիս համայնքի աշխատակազմի քարտուղար
Պարոն Կամո Զարոյանին

Հարգելի՛ պրն Զարոյան,

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն Վարդենիս համայնքում իրականացրեց «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի հանրայնացման բարձրացում՝ միջոլորտային գործընկերության և համայնքային ներգրավվածության միջոցով ծրագիրը:

Ծրագրի հիմնական նպատակն էր նպաստել «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» (ԿԽԱ) օրակարգի հանրայնացմանը նաև մարզային մակարդակում:

Ծրագրի արդյունքում մշակվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N1325 բանաձևի դրույթների իրականացման Գործողությունների Ազգային Ծրագրից բխող 2023-2024թթ-ի տեղական գործողությունների ծրագիր և ծրագրի իրականացման ժամանակացույց՝ Վարդենիս համայնքի համար, որը ևս կցված է նամակին:

Սույն թվականի օգոստոսի 1-ից Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ-ն սկսել է Վարդենիս և Իջևան համայնքներում իրականացնել նոր՝ «ՄԱԿ-ի 1325 բանաձևի տեղական գործողությունների ծրագրերի համատեղ իրականացում Վարդենիսում և Իջևանում» ծրագիրը, որի արդյունավետ իրականացման համար շատ կարևոր է նախորդ՝ համատեղ ծրագրի շրջանակներում մշակված Տեղական գործողությունների ծրագրի ընդգրկումը ավագանու հերթական նիստի օրակարգում և հաստատումը:

Սույն գրությամբ դիմում ենք Ձեզ «ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N1325 բանաձևի դրույթների իրականացման 2023-2024թթ-ի տեղական գործողությունների ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցի» հաստատումը մեզ հետ կիսվելու համար:

ՀԿ նախագահ՝ Ն. Առաքելյան

Կատարող՝ Անի Թովմասյան
«ՄԱԿ-ի 1325 բանաձևի տեղական գործողությունների ծրագրերի
համատեղ իրականացում Վարդենիսում և Իջևանում» ծրագրի փորձագետ
Հեռ.+374 55442249, E-mail: anitovmasyan.a@gmail.com